

Մ.Խ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Սփյուռքահայ գրականության պատմության մեջ ուրվագծվում է զարգացման երկու շրջան՝ սկզբնավորման ու կայացման՝ մինչև 1940-ական թվականները, և զարգացման՝ Երկրորդ աշխարհամարտից հետո ընկած ժամանակաշրջանը մինչև այսօր: Երկու շրջանի գրողների ստեղծագործությունների հիմնական թեման ու մոտիվները հանգում են ազգապահպանության գաղափարին՝ ընդհանուր առմամբ դառնալով կարոտի գրականություն: Քննվում են ազգապահպանության հարցերը սփյուռքահայ գրող Նիկողոս Սարաֆյանի երկերում:

Առանցքային բաներ. հայկական սփյուռք, կարոտի գրականություն, ազգապահպանության և պետականության գաղափարախոսություն:

1920-ական թթ. գրական ասպարեզ իջան ամերիկահայ (Համաստեղ, Վահե Հայկ, Արամ Հայկազ), ֆրանսահայ (Շահան Շահնուր, Վազգեն Շուշանյան, Շավարշ Նարդունի, Զարեհ Որբունի) և այլ արձակագիրներ: Սփյուռքահայ արձակի այս սկզբնավորողները մեծ մասամբ հանդես էին գալիս մամուլում: Նրանց ստեղծագործությունները՝ Համաստեղի «Գյուղը» (1924թ.), Շահնուրի «Հարալեզներուն դավաճանությունը» (1933թ.), «Նահանջ առանց երգի» (1929թ.), Որբունու «Փորձը» (1929թ.) և այլ գործեր, գալիս էին փաստելու, որ սփյուռքահայ գրականության մեջ սկսել էր զարգանալ նահանջի ու կարոտի գրականությունը: Այդ գրողների շարքը լրացնում է 20-րդ դարի սփյուռքահայ գրականության ներկայացուցիչներից մեկը՝ Նիկողոս Սարաֆյանը:

Նիկողոս Սարաֆյանը ծնվել է 1902թ. Վառնայում: Առաջին աշխարհամարտի տարիներին հայտնվում է Ռումինիայում, հետո՝ Օդեսայում, Ռուստովում, Նովոսիբիրսկում: Ականատես է լինում ռուսական հեղափոխությանը: Վերադառնալով Վառնա՝ գտնում է Առաջին աշխարհամարտի թոհուրոհի մեջ կորցրած ծնողներին, այնուհետև անցնում է Պոլիս, որտեղ էլ 1922թ. ավարտում է Կեդրոնական վարժարանը: Մինչև 1923թ. շրջագայելով տարբեր քաղաքներում՝ ի վերջո հաստատվում է Փարիզում: Աշխատակցել է «Հայրենիք», «Զուարթնոց», «Անահիտ», «Նայիրի», «Ակոս», «Բագին», «Մենք» և «Հառաջ» ամսագրերին ու թերթերին:

Բավականին անհանգիստ ու շարժուն կյանք է ապրել Սարաֆյան-մարդը: Նույնանման են նաև նրա՝ որպես գրողի կերպարը, բանաստեղծությունները: Նրա ներաշխարհի և ողջ ստեղծագործության հիմքը բանաստեղծությունն է. «Բանաստեղծութիւն ամէն բանէ առաջ քերթուածին եւ վէպին մէջ: Մնացեալը,

անշուշտ, վէպ թէ քերթուած, առանց այդ բանաստեղծութեան, արհամարհելի են...: Իրական արուեստը բանաստեղծութիւն է, կրակը, հոգիներէն ներս թափանցող զորութիւնը, կախարդողը» [1]: Թեման մարդն ու կործանված հայրենիքի գաղափարներն են, որոնց մասին խոսքը տեղ հասցնելու համար Ն. Սարաֆյանը և՛ դիմում է այլաբանությանը, և՛ ստեղծում իրապաշտական ու բնապաշտական պատկերներ: Օգտագործում է պատմությունն ու առասպելը, հասնում մինչև ազգային ակունքները՝ էպոսին, որպեսզի այնտեղից նորից նոր ծնեցնի հայ տեսակին սնող-ապրեցնող միտքն ու գաղափարը: Յուրովի ներկայացնի մարդ-երևոյթը, որը, սակայն, ոչ նիցշեական գերմարդն է և ոչ էլ մեր դյուցազուններն ու արքաները, այլ ներկա հայը՝ իր առօրյայով, կենսակերպով ու մտածելակերպով. «Իմացական որոնումներու ճամբուն վրա նուաճելէ ետք տարաշխարհն ու անոր ստեղծագործ ոգին բռնկումը զգալով իր ներսիդին, բանաստեղծը ձեւ ու մարմին կուտայ իր հոգեմտաւոր էութիւնը սնուցող ոգեղէն ուժին, որ պիտի փայլատակեր միայն ու միայն մարդկային տառապանքէն ու անհատական ցափն ընդմեջէն, մինչ միտքը կը հասնի խոհի բարձրութեան» Կը սուրայ ան մեծ թռչունին կոնակին» [2]: «Անջրպետին մը գրավումը», «14 (Քերթուած)» (1933 թ.), «Տեղատվութիւն և մակընթացութիւն» (1934 թ.), «Միջնաբերդ» (1946 թ.), «Միջերկրական» (1971 թ.) ահա բանաստեղծական այն ժողովածուները որոնք պետք է ներկայացնեն Սարաֆյանի Սարաֆյանի հայրենասիրական ու հայրենագիտական ոգին: Սփյուռքն ամբողջությամբ վերապրող ու նրա գոյապահպանության խնդիրներով տառապող Սարաֆյան-արվեստագետն իր ստեղծագործական կյանքի միտումը համարում էր արվեստի շնորհիվ Սփյուռքի զատումը օտար բարքերից, պահպանելով հայկական դիմագիծը՝ բարձրացնել այն մինչև համաշխարհայինի մակարդակը:

1920-ական թվականների վերջերից Սարաֆյանը բանաստեղծական ժանրից անցում է կատարում արձակին, որը կարելի է բաժանել երկու հիմնական տեսակների՝ վիպական և էսսեների կամ փորձագրական արձակի: Պոեզիայից արձակին անցնելու պատճառներից մեկը Սարաֆյանը համարում է «ազգային պատմութեան սէրն» ու «անհետացող Սփիւռքը» փրկելու նպատակը, որն էլ, ըստ ամենայնի, դրդապատճառ է հանդիսացել, որ գրողը կատարի նույն քայլը, ինչ իր ժամանակին արեց Խ. Աբովյանը. գրել վէպ, որ կլինի ժողովրդի համար, իր խորքում կամփոփի անհետացող Սփյուռքի էջերը, ազգային պատմությունը, բայց և միաժամանակ կլինի նորի արտացոլումը, կխոսի ներկա մարդու մասին, ցույց կտա մարդկության տեղատվությունն ու մակընթացությունը ժամանակի հոսանքի մեջ, որտեղ մարդը կճանաչի ինքն իրեն, կտեսնի համայն մարդկության մեջ իր տեսակի առանձնահատկությունները: Խոսելով իր՝ պոեզիայից ար-

ձակին անցնելու պատճառների մասին՝ Սարաֆյանը նշում է. «Մեր մեջ վէպին պակասը պատճառներէն մէկն է թերեւս անոր տրուած կարելորութեան: Ազգային պատմութեան սէրն է նաեւ՝ այդ պատճառը և կամ անհետացող Սփիւռքը էջերու մեջ առնելու արդար փափաքը: Բայց կը գուշակենք տակաւին ուրիշ պարագաներ, երբ աչք կը նետենք աշխարհի վրայ, ուր տեղի տուած են սէրն ու երազանքը, իտէալն ու խորհուրդը՝ առօրեայ պահանջներուն, հոգսերուն եւ անձկութիւններուն առջեւ» [1]:

Արձակի մեջ Սարաֆյանը փորձում էր գտնել խոսքի ու մտքի այն արտահայտչամիջոցները, որոնք թույլ կտան, առանց կաղապարների ու սահմանների, վեր հանել սիրո, կրքի, սեռական կյանքի, Սփյուռքի բարոյալքվածության, մարդկային վարքութարքի խնդիրները: Քննել դրանք, ինչու չէ, նաև բանավիճել՝ միաժամանակ վերլուծելով, համադրելով ու հակադրելով դրանք միմյանց:

Ինչպես արևելահայ, այնպես էլ սփյուռքահայ գրականության մեջ 1920-40-ական թթ. հիմնական թեմաներն էին գյուղագրությունը, հուշի, կարոտի գրականությունը և առտնին կյանքը, իսկ վերջինում՝ նաև նահանջի գրականությունն ընդհանուր անվամբ: Սփյուռքահայ գրականությունը ներառում էր մի շարք թեմաներ. կապիտալի աշխարհը և հայ մարդու սոցիալական վիճակը, ծովման վտանգը, նորի և ազգային-ավանդական բարքերի բախումը, սփյուռքահողության ճակատագիրը, Հայաստան-Սփյուռք հարաբերությունները և այլն: Այս բոլորին միահյուսված՝ արծարծվում էին նաև համամարդկային խնդիրներ ու գաղափարներ, սոցիալ-քաղաքական, կենցաղային, մարդկային հոգեբանության հարցեր և անհատի անձնական հույզեր ու ապրումներ՝ սեր, ուրախություն, թախիժ, ողբերգություն. այն բոլորը, ինչն առհասարակ բնորոշ է և՛ հայ, և՛ համաշխարհային դասական գրականությանը:

Ֆրանսասահայ գրականության ներկայացուցիչ լինելով՝ Ն. Սարաֆյանը պահպանում էր ազգային ոգին, իր ստեղծագործության մեջ ներմուծելով եվրոպական գրականությանը բնորոշ գիծը՝ մարդու տառապանքը, որ ծնվում է սոցիալական ու քաղաքական հիմնախնդիրներից: Առաջին աշխարհամարտը, 1915 թվականի հայոց ցեղասպանությունը, հայերի տեղահանումներն ու հայկական սփյուռքի գոյացումը պետք է իրենց անջնջելի հետքը թողնեին Սարաֆյանի ողջ ստեղծագործության ու հատկապես արձակի վրա: «Հաճի Մօր մատը» (1929թ.), «Ավագ մեկուսացում» (1929թ.), «Հյուրը» (1930), «Ղուկաս Այպանելի» (1930-1931թթ.), «Կախարդանք» (1932թ.) «Խարիսխէն հեռու» (1932թ.), «Իշխանուհին», (1934 թ.), «Մանուկ Դուինեան» (1948թ.), «Լոյսի ցավեր» (1953թ.). գործեր, որոնք Ն.Սարաֆյանի վիպական արձակի լավագույն ձեռքբերումներն են: Սրանց մեջ Սարաֆյանը խտացրել է հայ մարդու կերպարը, ում թուրքի յաթա-

ղանը բռնի ուժով պոկել, արմատախիլ է արել իր բնօրրանից, թողել է անտուն ու անհայրենիք, ու վերջինս, հազար ու մի կերպարանք ընդունելով, մաքառում է օտար հողում, օտար բարքերի հորձանուտում՝ պահպանելու իր ծվեն-ծվեն եղած հոգին ու ֆիզիկական մասունքները, պայքարում՝ օտարի լծի տակ հաստատագրելու համար ամենակարևորը՝ իր դարավոր ինքնությունն ու ազատ, արժանապատիվ ապրելու մարդկային իրավունքը:

Գրողն ինքնակամ գնում է դեպի անցյալը, որ կարողանա հասնել ապագային. «Անցած ճանապարհի իմաստավորումը ոչ միայն ինքնության ճանաչում է, այլև ճանաչված ինքնությամբ ներկայում անելիքը ճշտելու ուղեցույց», - գրում է Գ. Անանյանը [3]: Անցյալի հուշերն իրենց տեղը զիջում են ձևավորված սփյուռքի կյանքի, պրոբլեմների, կենսակերպի, ծովման դրդապատճառների նկարագրություններին ու բացահայտումներին վիպական ժանրում: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ Սարաֆյանը ազգային և միջազգային խնդիրների շուրջ ծավալված բանավեճերի ժամանակ ահազանգի պես ի լուր համայն հայությանն ու աշխարհին հնչեցնում էր. «Փախավ, սահեցավ մեր հայրենիքը մեր ոտքերուն տակէն, ծովին տալով մեզ...» [1]: Ձերձ մնալով լալագին տողերից ու հայտարարություններից՝ շարունակում էր. «...բայց լավագոյն առիթն է այս՝ լողալ սորվելու համար: Մեզի կը մնայ սուզիլ՝ առանց երկար, բարակ չափելու, առանց վախի» [1]՝ դիտելով սփյուռքը որպես մի մեծ ուժ, որ կարող էր կարևոր դեր ունենալ հայ մշակույթի զարգացման գործում: Նա քաջ գիտակցում էր, որ միայն սեփական մշակույթի և գրականության առկայությունը կփրկի աշխարհասփյուռ հայերին ծովվելու վտանգից: Սարաֆյանն այն մեծերից մեկն էր, ովքեր, ինչպես ասում է Պ. Սևակը, «ժամանակից առաջ են ընկնում»: Իր ժամանակից առաջ էր նայում Սարաֆյանը՝ ոչ միայն ազգապահպանության գերխնդիրը դնելով Սփյուռքում, այլև այն դիտելով որպես մեզ ընձեռված լավագոյն հնարավորություն՝ ստեղծելու մի գրականություն, որը կլիներ նեղ ազգային շրջանակներից դուրս, կդառնար համաշխարհային գրականության մի մասնիկը, ու դրանով իսկ կարելի կլիներ լուծել ազգապահպանության գերխնդիրը. «Մեզի վիճակուած է քալել այս կամ այն մեծ զանգուածին հետ, բայց քալել գիտակցաբար» [1]: Իսկ գիտակցաբարի համար հարկավոր էր նախ սթափեցնել Սփյուռքին՝ ցույց տալու, որ «սուզուիլ» չի նշանակում խեղդվել օտար բարքերի մեջ, այլ պետք էր սովորել շնչել. «Արեւելահայ գրականութիւնը սկիզբէն ի վեր եղած է ժողովրդական եւ ատկէ տարբեր բան ըլլալու միտք չունի: Արեւմտահայը ձգտած է ու կը ձգտի մշակել բարձր գրականութիւն մը: Եթէ ժողովուրդը պետք ունի իր սնունդն ու հաճոյքը առնելու իր ընթերցումէն, նոյն այդ ժողովուրդը պետք ունի նաեւ ներկայանալու գերագոյն իր կարողութիւններով աշխարհի ժողովուրդներուն առջեւ» [1]: «Հսկում»

(1933թ.), «Վենսենի անտառը» (1948թ.), «Էքս-Լէ-Պենի մեջ» (1953թ.), «Միջերկրականը և հայը» (1957թ.), «Մշուշին մեջ» (1970թ.) և «Տեսարանները, մարդիկը և ես» (1994թ.) էսսեները վերը նշված Սարաֆյանական մտքերի ամբողջացումն ու կենտրոնացումն են:

Ն. Սարաֆյանի արձակը փաստում է, որ նա ևս հարում է «Մենք»-ի «տղոց նահանջի» գրական ժառանգությանը՝ միայն մի տարբերությամբ. եթե Շահնուրին հաջողվեց համապարփակ կերպով ներկայացնել հոգևոր ու ֆիզիկական նահանջը հայ մարդու, ապա Սարաֆյանը, ծավալվելով մի քանի վեպերի ու վիպակների մեջ, այդպես էլ չկարողացավ մինչև վերջ ամբողջական կերպարանք տալ նահանջի թեմային, թեև չափազանց դիպուկ օրինակների, համեմատությունների, երկընտրական վիճակների ու բախումնային դրությունների որոշակի պատկերներ ունի:

Սարաֆյանի վեպերի («Ավագ մեկուսացում» (1929թ.), «Հյուրը» (1930), «Ղուկաս Այպանելի» (1930-1931թթ.), «Կախարդանք» (1932թ.) «Խարիսխեն հեռու» (1932թ.), «Իշխանուհին», (1934 թ.), «Մանուկ Դուինեան» (1948թ.)) առանցքում ընկած է սեր-սեռական կյանք-կին եռամիասնությունը, որի տարրերից որևէ մեկի խախտվելու դեպքում քանդվում են նաև մյուսները: Գրողն այս եռանկյունու մեջ է տեսնում հայ տեսակի՝ օտարության մեջ խարիսխ նետելու, գոյատևելու միակ երաշխիքը: Հայրենիքից դուրս այդ արմատախիլ հերոսները միայն սիրո և ընտանիքի առկայությամբ ու պահպանմամբ կարող էին արմատավորվել օտարության մեջ: Իր վեպերում Ն. Սարաֆյանը հատկապես շեշտում է հայ տղայի ու հայ աղջկա վարքագծում ազգային բարոյական չափանիշերի խեղաթյուրումները: Ցույց է տալիս, թե հայ երիտասարդներն ինչպես են անցկացնում իրենց կյանքն օտար քաղաքակրթությունների հորձանուտում՝ գիշերները անառակ կանանց կողքին լուսացնելով, նրանց հետ ապրելով ու նրանց որպես ընտանիքի մայր ընտրելով: Իսկ հայ աղջիկները, կորցրած ամեն ամոթխածություն, տարվել են եվրոպական հովերով և ազգային սկզբունքները մի կողմ շարտելով՝ վաճառքի են հանում իրենց մարմիններն ու հոգին՝ անձնական հաճույքի, դրամի ու հարստության համար: Սարաֆյանն այս ամենին նայում է ներողամտաբար, քանի որ նրանց մեջ տեսնում է եղեռնի ճիրաններից ճողոպրած, աշխարհի բարբարոսություններից հալածված սերնդի մնացորդներին: Բարբարոսություններ, որոնցից չազատվեցին ոչ նրանց հարազատները, ոչ էլ ազգային բարոյական ըմբռնումները: Հետևաբար՝ տարօրինակ չէ նրանց կողմից բարոյականության չափանիշերի ոտնահարումը: Ազգապահպանման գաղափարով տոգորված Սարաֆյանը առանց կողմնակալության էջ առ էջ բացում, ցույց է տալիս, թե իրականում

որքան դժվար է բռնագաղթված, խարսխից զուրկ, օտար բարքերով ու սովորույթներով ապրող, պետականությունից ու մշակույթից զրկված ժողովրդի մի հատվածի համար սեփական դիմագիծը պահպանելը. «Հասկցեք, թե որքան դժուար է ազգ մը բաժնել միս ազգերեն, որոնցմէ կը զանազանուի միայն լեզուով եւ բարքերով: Ու ասիկա առաւելապէս ճիշտ է օտար ազդեցութիւններու ենթակա պզտիկ եւ պետականութենէ զուրկ ժողովուրդներուն համար: Մեծերը կ'ընդհանրացնեն կամ կը միջազգայնացնեն իրենց ազգային նկարագիրը: Պզտիկները կ'ազգայնացնեն ընդհանրացրածը» [1]:

Ուրիշներինը չազգայնացնելու համար պետք էր ստեղծել սեփականը, գրել նորօրյա հայ վեպ, որը կառչած չի լինի առասպելներից ու լեգենդներից, և որը ցույց կտա ներկա հայի, սփյուռքահայի դիմագիծն ու կերպարը: Սա էր Սարաֆյան-գրողի նպատակը: Իսկ ներկա սփյուռքահայը նա էր, ով ապրում էր իր օրվա վաստակով՝ օտարամուտ բարքերին ու սովորույթներին գերի: Հոգսաշատ սփյուռքահային հազիվ թե հետաքրքրեին հայկական մամուլում ընթացող գրական բանավեճերը: «Հեղափոխական եղբայրների»՝ խոսքից գործի չանցնող հավաքները չէին կարող որևէ կերպ նպաստել հայ մտքի, հայ կյանքի ու գործի բարելավմանը, այդ իսկ պատճառով Սարաֆյան-գրողի պայքարի առաջնահերթ առանցքն էր հանդիսանում «բարձրացնել ժողովրդին գրական ըմբռնումը» [1]՝ կրթելով ու դաստիարակելով նրան առավելապէս իր ներկայով և ոչ թե անցյալի հուշերով:

Սարաֆյանի արձակը փիլիսոփայական մտածումների, արվեստի ու գրականության վերաբերյալ խորհրդածությունների մի ամբողջություն է, սակայն ունի նաև վիպական ժանրի առանձնահատկություններ: Արձակում գրողին հաջողվել է մեկտեղել անցյալն ու ներկան՝ միահյուսելով դրանք մեկ ընդհանուր գաղափարի՝ տաղանդավոր անհատի շուրջ: Տաղանդ, որը, սակայն, գրողի կարծիքով՝ պակասել է մեզ դեռևս մեր վաղ անցյալից՝ Տիգրան Մեծի ժամանակաշրջանից, երբ Հայաստանը հզոր էր, ուներ պետականություն և իշխելու ուժ, բայց չունեւր սեփական գիր ու գրականություն, չունեւր մտավորականություն, որոնք առանցքն ու հիմքն են կազմում ամեն մի պետականության. «Պետականութիւնն ու մտաւորականութիւնն են, որ կը կազմեն ցեղին ոգին: Հողը կարելոր է ամէն բանէ առաջ, բայց հողէն և պետականութենէն առաջ, ամէնէն կարելորը՝ տաղանդը: Այդ է, որ պակասած է Տիգրան Մեծի շրջանեն, երբ հակառակ աշխարհակալութեան, չենք կրցած ըլլալ մեծութիւն մը, որովհետեւ Սահակն ու Մեսրոպը չեն ծնած տակաւին եւ արքունիք ու ազնուականութիւն կը խօսեին յունարէն եւ մեր դրամները կը ձուլէին յունարէն տառերով» [1]: Երկարատև շրջան պահանջվեց, մինչև որ հայ թարգմանական գիրն ու գրականությունը ազատա-

գրվեցին հունական ու հրեական ազդեցություններից, Արևելյան ու Արևմտյան Հայաստանի տաղանդի միահամուռ ուժերի ու ջանքերի շնորհիվ ստեղծվեց զուտ ազգային գրականություն, որը ծնում էր հայրենիքի ու պետականության, ազատագրական պայքարի գաղափարները՝ իր շուրջը համախմբելով բանաստեղծների, արձակագիրների: Թվում էր, թե կա արդեն ազգային գրականության կայուն հիմքը, բայց այստեղ վրա է հասնում 1915 թիվը: Առաջին հերթին գլխատելով ու Դեր Ջորի անապատներում կորցնելով ազգի ոգին ապրեցնողներին՝ մտավորական դասին, թուրքն այդպիսով վճռում էր մի շատ կարևոր հարց. չկա մտավորականություն, չկա և ժողովուրդ: Հետագա ժամանակաշրջանները, ի թիվս 1918-20, 1945 թվականների, ևս նպաստավոր չէին հայության համար. պետականության վերականգնման ձախողված փորձ, Երկրորդ համաշխարհային պատերազմ, հայաթափված Արևմտյան Հայաստան, ռուսական «եղբայրության» հովերով տարված Արևելյան Հայաստան, անորոշ վիճակում ապրող ու ծուլման վտանգի առաջ կանգնած Սփյուռք,- ահա ժամանակաշրջանի համառոտ նկարագիրը, որ տալիս է Սարաֆյանն իր արձակում:

Վեպերով Սարաֆյանը կարողացավ ցույց տալ այն բոլոր պայմանները, որոնք հայ ժողովրդի ավանդույթների, սովորույթների, սկզբունքների քայքայման պատճառ դարձան, մանավանդ այն հայերի համար, ովքեր կայացած չէին որպես հայ մարդ, չունեին մոլորությունների ու օտար բարքերի դեմ պայքարելու կամք ու գիտակցություն: Իր արձակով գրողը զարգացնում է միասնականության, մեկ ազգի, մեկ հայրենիքի գաղափարը՝ այսպանելով ազգի ոգին քայքայող երևույթները:

Սարաֆյանի վեպերի առանցքում այն հերոսներն են, որոնց միջոցով գրողը պատկերում է իրեն հուզող խնդիրները, բարձրացնում իրեն անհանգստացնող հարցերը: Սարաֆյանը ներկա է իր բոլոր քերթվածների մեջ՝ հաճախ միայն իր գաղափարներով, հաճախ էլ՝ նաև անձապես: Իր հերոսների հույզերն ու տագնապները նաև իրենն են: Մարդու ներաշխարհը թափանցելու կարողությունը նրան ընձեռել է հնարավորություն՝ ուսումնասիրելու իր հերոսների հոգեկան ու իմացական աշխարհները, ի հայտ բերելու նրանց թաքուն մտքերը: Ն. Սարաֆյանի արձակով կարելի է ճանաչել հայ մարդու կերպարը, այդ թվում՝ նաև հենց իրեն՝ որպես մարդու, ով մեզ մեկ անգամ ևս ճանաչեցրեց սփյուռքահային:

Սարաֆյանը կարողացել է ստեղծել վիպագրության սեփական ոճը, որը մոտ ու հարազատ է մեր ոգուն: Խոսում է մեր ցավերի, տառապանքների, համազգային երազանքների մասին: Ունի համարձակ ու պայքարող գրիչ, որի նպատակն է հային տալ ինքնություն ու հայի դիմագիծ: Սարաֆյանի արձակի կենտրոնում են մնում նախաեղեռնյան օրերի, ցեղասպանության, աքսորի,

Սփյուռքի պահպանման թեմաները՝ նորովի հայացքով, ամեն տողի հիմքում դնելով սփյուռքահայության ու կորսված հայրենիքի արմատները պահպանելու միակ արժանի գաղափարախոսությունը՝ պետականության պահպանումն ու ամրապնդումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Սարաֆյան Ն.**, Տեսարանները, մարդիկը եւ ես, Եր., 1994:
2. **Քիլեճեան Ս.**, Ն.Սարաֆյան բանաստեղծը/Գարուն, Եր., 2002, թիվ 5, էջ 76:
3. **Անանյան Գ.**, Առասպելը առասպելի մասին/Գրական թերթ, 2005, 17 հունիսի, էջ 4:

M.X. MANUKYAN

ИДЕЯ СОХРАНЕНИЯ НАЦИИ В ПРОИЗВЕДЕНИЯХ НИКОГОСА САРАФЯНА

В истории литературы армянской диаспоры выделяются два периода: период начала и становления до 1940-х годов и период развития после Второй мировой войны до наших дней. Основная тема и мотивы писателей, творивших в эти два периода, сводятся к идее сохранения нации, ставшей в основном ностальгической литературой. Рассматриваются вопросы сохранения нации в произведениях армянского писателя диаспоры Никогоса Сарафяна.

Ключевые слова: армянская диаспора, ностальгическая литература, идея сохранения нации и государственности.

M.KH. MANUKYAN

THE IDEA OF NATION PRESERVATION IN THE WORKS OF NIKOGHOS SARAFYAN

Two periods of development are outlined in the history of the diaspora Armenian literature – the originization and realization until the 1940s and the development – the period after the World War II up to present. The main subject and the motives of the writers creating in these two periods are related to the idea of nation preservation, becoming, on the whole, literature of nostalgia. The issues on nation preservation are considered in the works of the diaspora Armenian writer Nikoghos Sarafyan.

Keywords: Armenian diaspora, literature of nostalgia, ideology of nation preservation and statehood.